ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ << ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի / 23 դասաժամ / , գերմաներենի / 12 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ / ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում / Ձև 1 /,
- մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ /,
- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /,
- ինքնակենսագրություն / Ձև 5/,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում /,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և հալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 22-ից մինչև 2022թ-ի հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ-ի հունվարի 10-ին՝ ժամը՝ 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Դիմիտրով, Մայակովսկու 43/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-61-24-43 հեռախոսահամարով: